ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- դեկտեմբերի 2021 թվականի № Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի №106Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՀԵԼԻՈՍ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի դեկտեմբերի 9-ի և դեկտեմբերի 14-ի գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով 44 օրով երկարաձգել Հանձնաժողովի 2020 թվականի ապրիլի 1-ի №106Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Հելիոս-2» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0674 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0674 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը: Ընկերությունը հայտնել է, որ Կայանի կառուցումը ԼԷ №0674 լիցենզիայով սահմանված ժամկետում հնարավոր չի եղել ավարտել, քանի որ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված ռազմական գործողությունների պատճառով Ընկերության՝ կարևոր գործառույթ իրականացնող մի շարք աշխատակիցներ զորակոչվել և գտնվում էին ռազմաճակատում, ինչի արդյունքում արևային կայանի կառուցման աշխատանքների մի մասը ժամանակավորապես դադարել էր: Նշել է նաև, որ հիշյալ հանգամանքը չէր կարող կանխատեսվել կամ կանխվել Ընկերության կողմից և չէր գտնվում Ընկերության վերահսկողության ներքո: Ելնելով վերոբերյալից՝ Ընկերությունը խնդրել է ԼԷ №0674 լիցենզիայի պայմանների չկատարումը համարել ֆորս մաժորի հետևանք և Ընկերության ներկայացրած երաշխիքով

սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չփոխանցել,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի՝

- 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե որոշում է ընդունել արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին,
- 10-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի,

գ) Հանձնաժողովը, ուսումնասիրելով առկա փաստական հանգամանքները, գտնում է, որ ԼԷ №0674 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը ենթակա է երկարաձգման ընկերության կողմից հայցվող 44 օր ժամկետով, իսկ Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը ենթակա չէ փոխանցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, քանի որ Ընկերության կողմից ԼԷ №0674 լիցենզիայի պայմանների չկատարումը հետևանք է ֆորս մաժորի: Մասնավորապես, Կայանի կառուցման աշխատանքները սահմանված ժամկետում ավարտելուն խոչընդոտել են 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ը Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից ձեռնարկված ռազմական գործողություններով պայմանավորված՝ Կայանի շինարարության աշխատանքներին ներգրավված մի շարք կարևոր աշխատակիցների զորակոչման հանգամանքը, որը որևէ
կերպ չէր կարող գտնվել Ընկերության վերահսկողության ներքո կամ կանխվել վերջինիս կողմից,

դ) Ընկերության կողմից ԼԷ №0674 լիցենզիայով ամրագրված պարտավորությունների պատշաճ կատարման ապահովման նպատակով Հանձնաժողով ներկայացված «Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի մարտի 2-ի գրությամբ տրամադրված №1280-02 երաշխիքի գործողության ժամկետը մինչև 2023 թվականի մարտի 2-ն է, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Կարգը, այդ թվում՝ Կարգի 78-րդ կետը, Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 10-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Քառասունչորս օրով երկարաձգել Հանձնաժողովի 2020 թվականի ապրիլի 1-ի «ՀԵԼԻՈՍ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Հելիոս-2» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №106Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված Կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0674 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ ճշգրտելով նաև արտադրության ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2022 թվականի հունվարի 2-ը» բառերը փոխարինելով «մինչև 2022 թվականի փետրվարի 15-ը» բառերով, իսկ «մինչև 2042 թվականի հունվարի 2-ը» բառերը՝ «մինչև 2042 թվականի փետրվարի 15-ը» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 2-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- դեկտեմբերի 2021թ.